Վահան Տերյան

Մենության խավար զնդանից կրկին

Մենության խավար զնդանից կրկին
Ես վերադարձա հզոր և հպարտ,
Եվ ինձ ողջունեց աղմուկը զվարթ,
Ու նոր խնդությամբ այրեց իմ հոգին . . .

Անխոս տանջանքիս գիշերում անքուն
Իր հուրը վառեց մի պայծառ կարոտ,
Նոր սիրով լեցուն՝ դարձա ես ձեզ մոտ
Եվ նոր երգեր են հնչում իմ հոգում:

Եկա, որ այստեղ ձեզ համար այսօր
Հրրեղեն խոսքեր կռեմ և խնդում,
Լսեմ հաղթական մարտի ցնծություն,
Տեսնեմ շարքերը ձեր հզորազոր:

Եվ լուսաբացին, երբ հոգնած լինեք,
Երբ քնած լինեք՝ թշնամուց խաբված,
Արևածագի ցնծությամբ արբած,
Կանչեմ ձեզ, ճըչամ՝ եղբայրներ, ելե՛ք . . .